ԼՂԻՄ-Ը ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ՀԵՏՈ

Հետհամագումարյան օրերին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կացությունը էական փոփոխություններ չկրեց: Երկուշաբթի՝ հունիսի 12-ին, մարզային ու շրջանային կենտրոններում դարձյալ չէին աշխատում արդյունաբերական ձեռնարկությունները, շինարարական կազմակերպությունները, տրանսպորտը, բնակչության կենցաղի սպասարկման և հասարակական սննդի ոլորտները, մշակութալուսավորական հիմնարկները: Կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում շարունակվում են գյուղատնտեսական աշխատանքները: Գործադուլ չի անում միայն Շուշիի շրջանը:

Ղարաբաղցիները անհամբերությամբ են սպասում Մոսկվայից իրենց դեպուտատների վերադարձին, որոնք հանդիպում են ունենալու Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովի հետ: Նրանք ընդհանրապես գոհ են ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում իրենց ընտրյալների բռնած դիրքից:

Ամեն օր երեկոյան ժամերին Ստեփանակերտի Հաղթանակի հրապարակում միտինգներ են տեղի ունենում: Դրանցից վերջինի ժամանակ, որը տեղի ունեցավ հունիսի 11-ին, ելույթ ունեցողները նշում էին, որ երկրամասի տնտեսական զարգացման խնդիրները հնարավոր է հաջողությամբ իրականացնել միայն ԼՂԻՄ-ի խնդրի քաղաքական լուծման դեպքում: Հավաքվածները պահանջեցին վերականգնել կուսակցության մարզկոմի և ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի ֆունկցիաները, կընճատել պարետային ժամը, ինչպես նաև փոխել Լեռնային Ղարաբաղի Հայկական ԽՍՀ-ի հետ միավորվելու շարժման ակտիվիստներից մեկի՝ հետաքննության ներքո գտնվող Արկադի Մանուչարովի նկատմամբ գործադրվող կանխարգել միջոցը:

Ինքնավար մարզի օպերատիվ իրադրությունը համեմատաբար հանգիստ է, թեպետև զգացվում է ներքին լարվածությունը: Վերջին ժամանակներս ազգամիջյան հողի վրա լուրջ հանցագործություններ չեն գրանցվել: Երկրամասի հայ բնակչությունը դրական տեղաշարժեր է ակնկալում իր առաջադրած հարցերի լուծման ասպարեզում:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ